Digitally signed by GHAZARYAN HOVHANNES 1404750070
Date: 2023.12.26 17:47:11 AMT

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/42208/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հայցադիմումը վարույթ ընդունելու
և գործը գրավոր ընթացակարգով քննելու մասին

26 դեկտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Հովհաննես Ղազարյանի, ծանոթանալով «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/105» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կայացված որոշումը մասնակի՝ «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցադիմումին և կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց

08.12.2023 թվականին Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել է «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/105» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կայացված որոշումը մասնակի՝ «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջով:

Դատավորի աշխատակազմին գործը հանձնվել է 13.12.2023 թվականին:

18.12.2023 թվականին Դատարանի աշխատակազմը հաղորդակցության միջոցով տեղեկացրել է հայցվորի ներկայացուցչին հայցադիմումում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջների խախտման առկայության մասին տեղեկացվելուց հետո եռօրյա ժամկետում, արձանագրված թերությունները վերացվել են, և հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին

համապատասխան, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասով և 27.2 գլխով սահմանված կանոնների պահպանմամբ:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերը բացակայում են, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահի դրությամբ օրենքով սահմանված բացառություններ առկա չեն, Դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, նույն օրենսգրքի 27.2 գլխի կանոններով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1/. «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/105» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կայացված որոշումը մասնակի՝ «Թագ ՀԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել Դատարանի վարույթ:

2/. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի փետրվարի 08-ին «DataLex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով (պաշտոնական կայքը՝ datalex.am):

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հովհաննես Ղազարյան